

## ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ XIX Դ. ՎԵՐՋԻ - XX Դ. ՍԿԶԲԻ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

### Յ. Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

Պատմության փիլիսոփայության և պատմագիտության մեջ պարբերաբար քննադատվել են պատմության քաղաքական տեսությունը և պատմության շարադրանքը որպես կայսրությունների, պետությունների, իշխանությունների վերելքի ու անկման ընթացք և պատմության պարբերացումը ըստ դրանց գոյության ու հաջորդափոխության ժամանակաշրջանների: Տարբեր են եղել քաղաքական պատմության քննադատության դրդապատճառները: Առավել ևս տարբեր են եղել պատմության նկատմամբ այն մոտեցումները, այն տեսական կաղապարները, որոնք առաջարկվել են որպես քաղաքական պատմության այլընտրանք: Ամենից հաճախ ասվել է, որ պատմական շարադրանքը պետք է ընդգրկի հասարակության ոչ միայն քաղաքական կյանքը, այլև նյութական ու հոգևոր մշակույթը, տնտեսությունը, կրոնը, գիտությունը, բարոյականությունը, իրավունքը: Սակայն ի՞նչ կերպ կարող է պատմության շարադրանքն այդպես համընդգրկուն դառնալ, արդյոք այդ դեպքում պատմական շարադրանքը չի՞ կորցնի իր ինքնությունը. չէ՞ որ, դասական ըմբռնմամբ, պատմության էական առանձնահատկությունն այն է, որ նա ներկայացնում է եզակի՝ միանգամայն, անկրկնելի եղելությունների հաջորդականությունը: Ուրեմն՝ նման տեսական, մեթոդաբանական, պատմափիլիսոփայական ընդհանուր հարցադրումները կմնան վերացական մտահղացումների մակարդակում, քանի դեռ չի առաջարկվել և չի իրականացվել պատմության գործնական շարադրանքը այդ մտահղացված կաղապարով: Ուստի շատ կարևոր է, երբ նման հարցադրումներ անում են և յուրովի իրականացնում իրենք՝ գործնական պատմաբանները: Հատկանշական է, որ հենց XX դարի պատմագրությունը տալիս է դրա ակնառու օրինակները, որ պայմանավորված է, ինչպես հետո կասվի, իր իսկ պատմական գիտության ապրած փոփոխություններով, նրա ներքին զարգացմամբ: Քաղաքական պատմության քննադատությունը ստորև կներկայացվի մի քանի տարբերակով: Դրանցից մեկը ֆրանսիական նշանավոր միջնադարագետ պատմաբան Մարկ Բյուկի տեսությունն է, որը լայնորեն հայտնի է դարձել «Պատմության ջատագովությունը» գրքի շնորհիվ: Այն շատ լավ ցուցադրում է, թե ինչպես իբրև քաղաքական պատմության այլընտրանք առաջադրված տեսությունը փոխում է նաև պատմության՝ որպես գիտության, առարկայի ըմբռնումը: Այլ է ամերիկյան պատմաբան Հ. Է. Բառնետի և նրա ներկայացրած՝ Կոլումբիայի համալսարանի պատմագիտական դպրոցի տեսությունը: Իբրև քաղաքական պատմագրության այլընտրանք Բառնետն առաջադրել է «պատմության մշակութային մեկնաբանությունը» և մի քանի աշխատություններում այդ կաղապարով շարադրել է Եվրոպայի պատմությունը և Արևմտյան քաղաքակրթության պատմությունը<sup>1</sup>: Հենց այս հետաքրքրական մոտեցումներն էլ լինելու են հիմնականը մեր հետագա շարադրանքի մեջ:

<sup>1</sup> H. E. Barnes. The New History and Social Studies. New York: The Century Co., 1925 (հետագայում՝ Barnes, 1925); H.E. Barnes. The History of Western Civilization. Vols. 1-2. New York: Harcourt, Brace and Co., 1935 (հետագայում՝ Barnes, 1935).

Ահա թե ինչպես է ներկայացնում քաղաքական պատմագրության քննադատության ավանդույթը Մարկ Բլոկը: Արդեն XVIII դարում վոլտերը, Ալատի ու Աննալով Ֆրանսիայի պատմության եղած շարադրանքները, գրել է. «Կարելի է կարծել, թե տասնչորս հարյուրամյակների ընթացքում Գալլիայում եղել են միայն թագավորներ, միմիատրներ ու նաև գեներալներ»: Բայց, չնայած քննադատությանը, ֆրանսիական պատմագրության մեջ այս ավանդույթը մնացել է գերակայող (որպես օրինակ Բլոկը հիշատակում է «Ֆրանսիայի պատմության» երկու նշանավոր բազմահատորյակները՝ 9 և 10 հատորով, հրատարակված XX դարի սկզբին, Էռնեստ Լավիսի խմբագրությամբ, որը ականավոր միջնադարագետ էր, լայնորեն հայտնի նաև ռուս պատմագրությանը): Նույն կերպ կատարվել է նաև պատմության պարբերացումը: Դարաշրջանները կապվել են մեծ արշավանքների ու նվաճումների հաջողափոխության հետ, միջնադարյան պատմագրության վրա իշխել է աստվածաշնչական առասպելը չորս թագավորությունների մասին (ասորեստանյան, պարսկական, հունական, հռոմեական), ավելի մոտ ժամանակների համար առանձնացվել են այս կամ այն ազգի՝ իսպանացիների, ֆրանսիացիների կամ անգլիացիների «գերակայության» ժամանակաշրջանները, իսկ մնացյալը հարմարեցվել է այս կաղապարին<sup>2</sup>: Սակայն նույն ֆրանսիական պատմագրության մեջ վոլտերյան գաղափարները զուգահեռաբար շարունակում էին արծարծվել: Ծատ պատմաբաններ անընդհատ հիշեցնում էին, որ հարկավոր է շարադրել ոչ միայն քաղաքական պատմությունը, այլև պատմական ամբողջի մեջ վերարտադրել պատմության մյուս բաղադրիչները՝ տնտեսությունը, արվեստը, կրոնը, իրավունքը և այլն: Բայց նրանք գիտակցում էին, որ այդ պատմական ամբողջը չի կարող ստացվել այդ բոլոր բաղադրիչների պատմական շարադրանքի մեխանիկական գումարից: Եվ ահա Բլոկը, ծավալելով այս գաղափարները, հանգում է համադրական (սինթետիկ) պատմության հետևյալ պատկերացմանը: Բանի որ պատմությունը գործ ունի եզակի, անհատական երևույթների հետ, քանի որ անհատական են իրենք պատմական ամբողջությունները, ապա հնարավոր չէ ունենալ նախապես սահմանված հիմնական հասկացությունների համակարգ այդ համադրությունը կատարելու համար: Համադրման համար կիրառվող հասկացությունները պետք է ճշտվեն վերլուծաբար, կոնկրետ պատմական նյութով: Օրինակ՝ սովորաբար «ֆեոդալիզմ» տերմինով հայտնի երևույթները տարբեր երկրներում տարբեր են, երբեմն էլ բոլորովին ուրիշ բան են նշանակում. հիշենք թեկուզ սենիորալ համակարգը, սերվիտյուդը, լենդլորդությունը, ռուսական ճորտատիրությունը: Ուրեմն ճիշտ կլինի դրանք նույնքան եզակի՝ անհատական, անկրկնելի երևույթներ համարել, ինչպես որ եզակի է մեծատառով գրվող վերածնունդը (Ռենեսանսը): Նույնը վերաբերում է պատմության նաև պարբերացմանը: Պատմական հետազոտության մեջ առանձնացված ամեն մի երևույթը, իր ուրույն բնույթի բերումով, ինքն է կանխադրում իր պատմական ժամանակի տևողությունը: Այսպիսի վերլուծական աշխատանք կատարելուց հետո արդեն կարող է կատարվել ընդհանրացում, համադրում (սինթեզ)՝ ամբողջի պատմական վերակազմություն՝ նրա քաղաքական, տնտեսական, մշակութային և մյուս բաղադրիչներով: Այդպիսի ամբողջի համար Բլոկը գործածում է «քաղաքակրթություն» տերմինը:

«Համադրական պատմության» գաղափարի այս տարբերակը մի ավելի լայն համատեքստ ունի: Մարկ Բլոկը Լյուսիեն Ֆելդի հետ միասին եղել է «Աննալներ» («Տարեգրություններ») հանդեսի հիմնադիրը, հանդես, որի հետ կապվում է ֆրանսիական պատմագրության մի ամբողջ ժամանակաշրջան: Բլոկի պատմագիտական ըմբռնումները, «համադրական պատմության» մասին նրա պատկերացումները բնորոշ են «Աննալների» դպրոցի համար: «Համադրական պատմությունը»,

<sup>2</sup> Տե՛ս Մ. Блок, Апология истории, М., 1986, էջ 100-106:

ըստ Բյուկի, պետք է դառնա այն ընդհանուր հողը, որի վրա պետք է համագործակցեն բոլոր հասարակական գիտությունները, ուստի պատմությունը պետք է ընդգրկի հասարակության սոցիալական կառուցվածքը, տնտեսությունն ու տրանսեսական հարաբերությունները, արվեստի և գրականության պատմությունը և հասարակական ամբողջի մյուս բաղադրիչները՝ վերցված իրենց պատմական զարգացման մեջ<sup>1</sup>: Այնպես որ այս մտահղացմամբ պատմությանը վերապահվում է մի լայն գործառույթ՝ հասարակական ամբողջի ներկայացումը, և դրանով իսկ վերանայվում է նրա առարկան. մասնավոր հումանիտար գիտությունից պատմությունը վերածվում է հասարակության մասին ընդհանրական գիտության՝ հասարակագիտության, սոցիոլոգիայի: Ուրեմն, իր մասնավոր առանձնահատկություններով հանդերձ, Բյուկի պատմագիտական տեսությունը դառնում է պատմության առարկայի սոցիոլոգիականացման մի տարատեսակություն: Այս առումով պատմական չեն նաև Մ. Բյուկի, Լ. Ֆերի և «Աննալների» ամբողջ դպրոցի առնչությունները Մարքսի հասարակագիտության և պատմության մարքսյան մեկնաբանության հետ:

Այնինչ բուն պատմագիտության մեջ միշտ և իրավացիորեն թերահավատություն է եղել այն բոլոր տեսությունների նկատմամբ, որոնցում անտեսվում է պատմության՝ որպես գիտության, առարկայի ինքնուրույն կարգավիճակը: Եվ հենց այս տեսակետից էլ բացառիկ հետաքրքրություն է ներկայացնում համարական պատմության և պատմության մշակութային մեկնաբանության դպրոցը քսաներորդ դարակազբի ամերիկյան պատմագրության մեջ: Այդ դպրոցը ձևավորվեց պատմության առարկայի շուրջն ընթացող տեսական և պատմափիլիսոփայական բանավեճերի ընդհանուր մթնոլորտում:

XX դ. այն պատմաբանները և պատմափիլիսոփաները, որոնք հարում են պատմության մշակութային մեկնաբանության տեսակետին, հաճախ վկայակոչում են XIX դարի վերջի - XX-ի սկզբի այն պատմաբաններին (և համարյա միշտ՝ Լամարեյստին և Տրոլչին), որոնք, հանդես գալով քաղաքական պատմագրության քննադատությամբ, մարդկային պատմության էությունը և իմաստը տեսնում էին մշակույթի զարգացման, մշակութային առաջադիմության մեջ, և ըստ այդմ էլ մեկնաբանում էին պատմական գիտության կոչումը և պատմության շարադրանքի խնդիրը: «Ամբողջ պատմությունը մշակույթի պատմությունն է, մարդկության մշակութային առաջադիմության պատմությունը», - այսպես կարելի է ձևակերպել պատմության այս ըմբռնումը, որը գալիս էր փոխարինելու պատմության քաղաքական մեկնաբանությանը:

Ըստ այս ըմբռնման՝ շարադրական պատմագրության մեջ, իսկապես, պատմության ընթացքը անմիջականորեն ներկայանում է որպես եզակի անհատական եղելությունների, դեմքերի ու գործերի հաջորդականություն, իսկ իր խոր էությանմբ պատմությունը «կոլեկտիվ անհատականությունների»՝ մարդկային հանրությունների (ժողովուրդների, ազգերի, հասարակական խմբերի և այլն) հավաքական գործունեությունն է՝ նրա տարբեր դրսևորումներով՝ տնտեսության, բարոյականության, իրավունքի, արվեստի, քաղաքականության մեջ, հասարակական տարբեր հաստատություններում: Հենց դրանց ամբողջությունն էլ կազմում է մշակույթը, և պատմական գիտության խնդիրը այդ ամբողջության ներկայացումն է նրա բոլոր դրսևորումներով: Տարբեր մշակույթներում տարբեր են լինում մարդկային հանրությունների («կոլեկտիվ անհատականությունների») հավաքական գործունեության այդ դրսևորումները, որովհետև տարբեր է լինում դրանց վարքագիծը՝ պայմանավորված հասարակական գիտակցության, մտածողության

<sup>1</sup> Այս մասին տե՛ս նույն տեղում Ա. Յ. Գուրևիչի վերջաբանը, էջ 217-225:

ձևերի, աշխարհընկալման եղանակների առանձնահատկություններով, մի խոսքով՝ դրանց «սոցիալական հոգեբանությամբ»:

Ժամանակին հանդես եկած այս յուրահատուկ պատմագիտական ըմբռնումը և նրա տերմինաբանությունը հասկանալու համար հարկավոր է հիշել այն ընդհանուր մտավոր մթնոլորտը, որի պայմաններում պատմագիտության մեջ ձևավորվեց այս ըմբռնումը: XIX դարի կեսերից սկսած գիտական շրջանակներում մեծ արձագանք առաջ բերեցին հնադարյան մարդու և նախնակենցաղ ժողովուրդների մշակույթների վերաբերյալ ազգագրական (մարդաբանական) հետազոտությունները: Լյուիս Հենրի Մորգանի «Հնադարյան հասարակությունը» (1877), Էդուարդ Բառնետ Թայլորի «Հետազոտություններ մարդկության սկզբնական պատմության և քաղաքակրթության զարգացման վերաբերյալ» (1865), «Պրիմիտիվ մշակույթը» (1871) աշխատությունները նոր փուլ նշանավորեցին մշակույթի պատմության, տեսության, փիլիսոփայության բնագավառում: Դրանք ավարտին հասցրին ազգագրության՝ որպես ինքնուրույն գիտակարգի կազմավորումը: Եվ այսուհետև ազգագրական մեծածավալ փաստական նյութի, դաշտային հետազոտությունների, գրավոր աղբյուրների տվյալների հիման վրա, պատմահամեմատական եղանակով կատարված պատմական վերակազմության միջոցով, մշակվեցին նոր տեսություններ նախնակենցաղ ժողովուրդների մշակույթների և հնադարյան մշակույթի վերաբերյալ, դրանց բնորոշ հասարակական հաստատությունների ու հասարակական հարաբերությունների մասին, նորովի ներկայացան մշակույթի պատմությունը, մարդկային հասարակության պատմական էվոլյուցիան: Գիտական հիմքեր ստեղծվեցին մարդկության հոգևոր ու մտավոր մշակույթի, մասնավորապես նրա պատմական ձևերի՝ առասպելաբանության ու կրոնի էության և գործառույթների վերլուծության համար, մտածողական և ճանաչողական կաղապարների պատմամշակութային առանձնահատկությունների ուսումնասիրության համար: Եվ պատահական չէ այս խնդրակարգի, հարցադրումների, գաղափարների լայն արձագանքը ամբողջ պատմագրության մեջ և առհասարակ մարդկային հասարակությանը վերաբերող բոլոր գիտություններում՝ սոցիոլոգիա, հոգեբանություն, տնտեսագիտություն ու քաղաքատնտեսություն, փիլիսոփայական գիտություններում՝ բարոյագիտություն, գեղագիտություն, և բուն փիլիսոփայության մեջ՝ սոցիալական փիլիսոփայություն, պատմության փիլիսոփայություն, իմացաբանություն (մտածողության և ճանաչողության տեսություն):

Բուն պատմագրության մեջ նկատելի եղավ պատմամշակութային հետազոտությունների, դրանց խնդրակարգի, հարցադրումների, գաղափարների անդրադարձը պատմական մտածելակերպի վրա: Առաջին հերթին դա պատմական ամբողջը ներկայացնելու ձգտումն էր, որ հստակորեն արտահայտվեց «սինթետիկ (համադրական) պատմության» գաղափարի մեջ: Պատմամշակութային հետազոտությունների այս առանձնահատկությունը ցուցադրելու համար տեսնենք, թե ինչպես էր ներկայանում մշակույթը, դիցուք, Յ. Լիպերտի «Մշակույթի պատմության» մեջ: Մշակույթի պատմական էվոլյուցիան ներկայացնելու համար Լիպերտը մշակույթի ամբողջությունը բաժանում է երեք հիմնական ոլորտների: Առաջինը կենսապահովումն է, որն ընդգրկում է սննդի հայթայթումը, կացարանն ու հագուստը, ուրեմն՝ նյութական արտադրության բնագավառն ու եղանակները, աշխատանքի գործիքները, ինչպես և զենքերի պատրաստումը, նավագնացությունը, առևտուրը, և այդ ամենի պատմական էվոլյուցիան և դրանց առնչվող հըմտությունների, կարողությունների, գիտելիքների կուտակումն ու կատարելագործումը հնադարից մինչև դասական անտիկ շրջան: Երկրորդն ընդգրկում է մշակույթի հասարակական էությունը բնութագրող երևույթները՝ հասարակության կառուցվածքը, հասարակական հաստատությունները, հասարակական հարաբերությունները, սեփականության ձևերը, հասարակության շերտավորումը, մարդ-

կանց հանրության պատմական ձևերը, հանրային կյանքի կառավարման ձևերը՝ ընդհուպ մինչև պետություն, բարքերը, սովորույթները, իրավունքը, դատարանը՝ վերցված դրանց ձևափոխությունների մեջ, ամբողջ պատմական ժամանակաշրջանում: Եվ, վերջապես, երրորդ ոլորտը հոգևոր մշակույթն է իր պատմական զարգացման մեջ՝ լեզուն, գիրը, թիվն ու հաշիվը, պաշտամունքը, առասպելաբանությունը՝:

«Մշակույթի պատմություն» անվան տակ այսպիսի համակողմանի ամբողջական շարադրանքը ներկայանում էր իբրև պատմության միակողմանի՝ քաղաքական մեկնաբանության իրական այլընտրանքը, եթե առհասարակ պատմությունը շարադրվի նույն մոտեցմամբ և նույն կաղապարով: Այդ դեպքում, իսկապես, պատմության շարադրանքի գլխավոր բովանդակությունը կդառնա (եթե գործածենք Լամպրեխտի տերմինաբանությունը) մարդկության «մշակութային առաջադիմությունը» նրա անցած «պատմամշակութային դարաշրջանների» ընթացքում:

Ուշադիր քննելիս, սակայն, պարզվում է, որ այսպիսի շարադրանքը շեղվում է «պատմության» և «պատմական շարադրանքի» դասական պատկերացումներից, այսինքն՝ դա եզակի՝ անհատական, առանձին եղելությունների, մարդկային հանրությունների և պատմական անձերի միանգամայն գործողությունների հաջորդականության շարադրանք չէ, դա մշակույթի ամբողջականության մեջ նյութական արտադրության եղանակի, հասարակության կառուցվածքի, հասարակական հաստատությունների, հարաբերությունների, հոգևոր կյանքի էվոլյուցիայի նկարագրություն է: Դա, ուրեմն, դասական իմաստով պատմության շարադրանք չէ, այլ՝ պատմական մոտեցման մի օրինակ, պատմականության սկզբունքի տարածում մշակույթի և հասարակության քննության վրա: Դա տեսական կաղապար է, որը մարմնավորում է պատմության որոշակի ըմբռնում և սկզբունք, իսկ բուն, շարադրական պատմությունը դրա համեմատ էմպիրիկ է. այն եզակի եղելությունների (միանգամայն դեպքերի, դեմքերի ու նրանց գործերի) և դրանց հաջորդականության կոնկրետ շարադրանք է: Հատկանշական է, որ Լամպրեխտը պատմագիտության մեթոդաբանական հարցերի շուրջը անցած դարասկզբին ծավալված բանավեճերի ընթացքում խոսել է այն մասին, որ պատմությունը պետք է ունենա իր տեսական մասը, տեսության մակարդակը, որը պետք է հարաբերվի շարադրական («էմպիրիկ») պատմությանն այնպես, ինչպես որ ազգաբանությունն է հարաբերվում ազգագրությանը՝: Այդպիսի դեր էլ կարող են ստանձնել պատմամշակութային ամբողջությունների ընդհանուր շարադրանքները, որոնց մեկ օրինակն էլ հենց Լիպերտի կողմից տրված՝ մշակույթի պատմությունն է:

Պատմական մտածելակերպի վրա պատմամշակութային՝ մարդաբանական, ազգագրական հետազոտությունների ունեցած ազդեցության մյուս դրսևորումն այն է, որ մշակույթի և հասարակության բնույթը որոշող և պատմական եղելությունները պայմանավորող գործոնների թվում կարևոր տեղ է հատկացվում հասարակական («կոլեկտիվ») գիտակցությանը և հոգեբանությանը, մտածելակերպին և աշխարհայացքին: Հայտնի է, որ նախնակենցաղ ժողովուրդների մշակույթի և հնադարյան մշակույթի պատմական վերակազմություններում, որոնք տրվում են ազգագրական, մարդաբանական հետազոտություններում, խիստ աչքի է զարնում հասարակական («կոլեկտիվ») գիտակցության, մտածողության ձևերի, աշխարհընկալման եղանակների, մի խոսքով՝ «կոլեկտիվ հոգեբանության» ներկայությունը հասարակական կյանքի բոլոր ոլորտներում՝ նյութական արտադրության, աշխատանքի, հասարակության կառուցվածքի, մարդկանց հանրության պատմական ձևերի, հանրային կյանքի կազմակերպման ու կառավարման

<sup>4</sup> Տե՛ս Ю. Липперт, История культуры в отдельных очерках, СПб, 1902:

<sup>5</sup> Տե՛ս, օրինակ, Barnes, 1925, էջ 199-200, մեքերումը:

եղանակների, հոգևոր մշակույթի մեջ, որոնցում դրանք ունեն իրենց հատուկ, սիմ-վոլիկ (խորհրդանիշային) դրսևորումները: Եվ ահա, այդ ժամանակի՝ XIX դարի վերջի և XX-ի սկզբի գրականության մեջ մենք ունենք այս ամբողջ խնդրակարգի արծարծումը և այս նույն կաղապարի տարածումը մշակույթի և հասարակության պատմության վրա առհասարակ: Ինչպես որ պատմամշակութային տարբեր տեսություններում հոգեբանական գործոնը տարբեր կշիռ ունի<sup>6</sup>, այդպես էլ պատմագիտական տեսության մեջ, պատմության մեկնաբանություններում տարբեր նշանակություն է տրվում նրան: Պատմագիտական տեսության մեջ ցայտուն օրինակը Կարլ Լամպրեխտն է, որի համաձայն պատմական իրադարձությունները պայմանավորված են տվյալ ժամանակի հասարակական («կոլեկտիվ», հանրության) հոգեբանությամբ, իսկ պատմամշակութային դարաշրջանների բնույթը որոշվում է «ընդհանուր հոգեվիճակով», և դրանց հաջորդականությունը, անցումը մեկից մյուսին անցում է հասարակական հոգեբանության մի տիպից մյուսին<sup>7</sup>: Ուրեմն՝ Լամպրեխտի համար պատմամշակութային՝ ազգագրական, մարդաբանական հետազոտությունների իր մեկնաբանությունը ներկայացնում է որպես ընդհանուր-պատմական տեսություն: Ահա թե ինչպես է ներկայացնում այս հանգամանքը Էռնստ Կասիրերը. «Գերմանիայում Լամպրեխտի այս տեսությունը երկար ժամանակ գտնվում էր պատմության տրամաբանության շուրջն ընթացող բանավեճերի կիզակետում: Լամպրեխտը ձգտում էր ամբողջ պատմական կյանքը հանգեցնել մի քանի հոգեբանական տիպերի: Ըստ նրա՝ պատմության ընթացքում այս տիպերը հաջորդում են մեկը մյուսին հաստատուն և համամասն կարգով: Բոլոր ժամանակներում, բոլոր երկրներում, բոլոր մշակույթներում այս կարգը մնում է նույնը»<sup>8</sup>:

Նույն մոտեցումը մենք տեսնում ենք ժամանակի պատմագիտական և մշակութաբանական նաև ուրիշ տեսություններում, մասնավորապես՝ ֆրանսիական դպրոցում, որին, ընդհանուր առմամբ, հատուկ է պատմության և մշակույթի սոցիոլոգիական մեկնաբանությունը (մինչդեռ, նորից հիշեմք, ըստ Լամպրեխտի, մշակույթի ամբողջականությունն է մեզ ներկայանում պատմագրության մեջ): Նրա ներկայացուցիչներն աշխատում են տալ հասարակության և մշակույթի ամբողջության պատմական վերակազմությունը և այդ ամբողջության մեկնաբանության մեջ բացառիկ տեղ են հատկացնում հասարակական («կոլեկտիվ»)

<sup>6</sup> Ահա թե ժամանակին ինչ է գրել այս մասին անգլիական նշանավոր ազգագրագետ, մշակույթի տեսաբան Բրոնիսլավ Մալինովսկին: Մշակույթի հետազոտությունների մեջ հոգեբանական գործոնին ներկայումս անդրադառնում են բոլոր մարդաբանները, բայց նրան առաջնային նշանակություն է վերագրում Ռ. Գրեքները, իսկ ուրիշները նրանով լրացնում են մշակույթի իրենց նկարագրությունը՝ առաջնային համարելով մշակույթի պատմական հետազոտությունը: Այնինչ թե՛ մեկ և թե՛ մյուս մոտեցումը միակողմանի է. հասարակությունն ու մշակույթը և հոգեբանությունն ու մտածողությունը չի կարելի տարանջատել (տե՛ս **Б. Малиновский**, *Научная теория культуры*, М., 2000, էջ 40):

<sup>7</sup> Այս մոտեցմամբ Լամպրեխտը առանձնացնում է Արևմտյան քաղաքակրթության զարգացման հետևյալ պատմամշակութային աստիճանները. վաղ. նախնային՝ խորհրդանիշային աստիճան, միջնադարյան՝ տիպային աստիճան, այսինքն՝ իրանական մշակույթի տրոհումը տիպերի, տեսակների և դրանց կայունացումը, անհատականության աստիճան՝ վերածննդի և Լուսավորականության ժամանակաշրջանը, երբ հանդես են գալիս հանճարեղ անհատականությունների գործերը մարդկային գործունեության բոլոր ասպարեզներում, ռոմանտիկներից սկսվում է սուբյեկտիվիզմի աստիճանը՝ ընդվզումը ռացիոնալության դեմ, որից հետո դեռևս չի գտնվել մի նոր միասնական իդեալ, ասում է Լամպրեխտը «ինչ է պատմությունը» թեմայով Ամերիկայում կարդացած դասախոսություններում (1904) (այս մասին տե՛ս Barnes, 1925, էջ 198, 200):

<sup>8</sup> E. Cassirer. *The philosophy of history*. In: E. Cassirer. *Symbol, Myth, and Culture*. New Haven and London: Yale University Press, 1979, p. 133-134 (ընդգծումն իմն է - Լ.Գ.):

գիտակցությանը և հոգեբանությանը, մտածելակերպին և աշխարհայացքին: Այս դպրոցի սկզբնավորողներից մեկը՝ Էմիլ Դյուրկհայմը, նկատելի հետք է թողել պատմամշակութային հետազոտությունների և դրանց տեսական իմաստավորման բնագավառում: Ըստ Դյուրկհայմի՝ հասարակական կյանքի կազմակերպման եղանակը, նրա կառուցվածքը, հասարակական (կրոնական, բարոյա-իրավական, տնտեսական և այլ) հաստատությունները անդրադարձ արտացոլում են գտնում «կոլեկտիվ պատկերացումների» մեջ, դրանք հանդես են գալիս որպես տվյալ հասարակությանը բնորոշ գիտակցության, մտածողության, ճանաչողության կատեգորիաներ: Ավելի ճշգրիտ՝ հասարակության կազմակերպման եղանակը և «կոլեկտիվ պատկերացումները», փաստորեն, միևնույն էության երկու դրսևորումներն են: «Կատեգորիաները...,- ասում է Դյուրկհայմը,- իրենց էությանը կոլեկտիվ (այն է՝ հավաքականության. - Հ. Գ.) պատկերացումներն են, դրանք իրենցով արտահայտում են, ամենից առաջ, հավաքականության այս կամ այն վիճակը. դրանք կախված են նրա կառուցվածքից և կազմակերպման եղանակից, նրա կազմությունից, նրա կրոնական, բարոյական, տնտեսական և այլ հաստատություններից: Հետևաբար, այս երկու կարգի (էմպիրիկական և կատեգորիական - Հ. Գ.) պատկերացումների միջև կա այն նույն տարբերությունը, ինչը բաժանում է անհատականը հասարակականից»: Այստեղ հատկանշականը մեզ համար այն է, որ իր այս գաղափարները Դյուրկհայմը հիմնավորում, բխեցնում, լուսաբանում է ազգագրական, մշակութաբանական փաստական նյութով: Եվ, այնուհետև, Դյուրկհայմը իր այս գաղափարներն ընդհանրացնում է և տարածում ամեն մի (նաև զարգացած) հասարակության վրա՝ որպես նրա նկարագրության պատմամշակութային կաղապար. ամեն մի հասարակություն մեկ ուրիշից տարբերվում է իր հասարակական կազմակերպությունը և, համապատասխանաբար, իր «կոլեկտիվ պատկերացումներով», մտածողության, գիտակցության, ճանաչողության կատեգորիական համակարգով: Պատմամշակութային հետազոտությունների ֆրանսիական դպրոցի մեկ ուրիշ ներկայացուցիչ՝ Լյուսիեն Լևի-Քրոյվը, գործառում է Դյուրկհայմի մուծած «կոլեկտիվ պատկերացումներ» հասկացությամբ: Հասարակության տիպերի բնութագրության ու տարբերակման համար նա նույնպիսի որոշիչ տեղ է հատկացնում դրանց և գտնում է, որ, ըստ այդմ, նախնակենցաղ ժողովուրդներին բնորոշ է «միևնչտրամաբանական մտածողությունը», որը և բնութագրում է նրանց ամբողջ մշակույթը: Կլոդ Լևի-Ստրոսը՝ ֆրանսիական դպրոցի մեկ ուրիշ ականավոր ներկայացուցիչը, հասարակության և մշակույթի պատմական ձևերի նկարագրության մեջ էական նշանակություն է տալիս նույնպես հոգեբանական գործոնին:

Պետք է նկատել, սակայն, որ պատմագրության այս նոր ըմբռնումները, որոնք արծարծվում էին նրա առարկայի և խնդիրների շուրջը ծավալված քննարկումներում, միշտ չէ, որ տեսության մակարդակից փոխադրվել են գործնական ոլորտ, պատմության կոնկրետ շարադրանքի մեջ: Է՛ր՛ն՛ստ Կասիրերը մնան վերապահում անում է նույնիսկ այնպիսի պատմաբանների համար, ինչպիսիք են Կարլ Լամպրեխտը և Հիպոլիտ Տենը՝ այդ քննարկումների ակտիվ մասնակիցները: Թ՛վարկելով նրանց մեծածավալ պատմական աշխատությունները՝ նա գրում է. «...Եթե հանգամանորեն վերլուծելու լինենք այդ պատմական աշխատությունները և համեմատենք դրանց հեղինակների ընդհանուր տեսական և փիլիսոփայական հայացքների հետ, ապա կտեսնենք, որ հաճախ ակնհայտ հակասություն կա այն

\* Տե՛ս Է. Դյուրկհայմ, Социология и теория познания. В кн.: "Новые идеи в социологии", сб. 2, СПб, 1914, էջ 37-38: Այս հրատարակումը պարունակում է հատվածներ Դյուրկհայմի «Կրոնական կյանքի տարրական ձևերը և տոտեմների համակարգերը Ավստրալիայում» աշխատությունից, որտեղ էլ ներկայացված է այդ ազգագրական, մշակութաբանական փաստական նյութը:

բանի միջև, ինչ Տենը կամ Լամպրեխտը ուսուցանում են որպես պատմության փիլիսոփաներ, և այն բանի, ինչ նրանք արել են որպես պատմաբաններ...<sup>10</sup>»:

Այսուհանդերձ, պատմագրության ընդհանուր փիլիսոփայական խնդիրների շուրջը ծավալված քննարկումների ընթացքում «պատմության մասին ստեղծված մտահայեցողական տեսությունները» (սա Կասիրեի տերմինաբանությունն է) ապարդյուն չանցան: Այդ քննարկումներն արտացոլում էին ժամանակի պատմագրության զարգացման միտումները, դրանք արգասավոր հող եղան պատմության տեսության և պատմափիլիսոփայության նոր գաղափարների մշակման համար:

- Պատմության քաղաքական մեկնաբանության քննադատությունն ուղեկցվում էր նաև շարադրական (narrative) պատմագրության քննադատությամբ: Իսկապես, քաղաքական պատմագրությունն իր էությունը շարադրական է, այն պատմությունը ներկայացնում է որպես մի ընթացք՝ կապված քաղաքական անցքերի, անձերի ու նրանց գործերի հաջորդականության հետ: Ծարադրական պատմագրության քննադատությունը երբեմն ծայրահեղ, ժխտողական դրսևորումներ ունեցավ: Գիտական պատմագրության շատ կողմնակիցներ գտնում էին, որ պատմության՝ որպես գիտության բուն խնդիրը պատմության ընթացքի բացատրությունն է՝ պատմական եղելությունների պատճառների բացահայտումը, պատմական օրինաչափությունների ձևակերպումը, իսկ պատմական եղելությունների հաջորդականության շարադրումը կոչված է սուսկ ծառայելու այդ խնդրին<sup>11</sup>: Ժամանակը ցույց տվեց, որ սխալ կլինեք այդպես թերագնահատել կամ նույնիսկ ժխտել շարադրական պատմագրությունը: Պատմության ընթացքի, միանգամայն անցքերի, պատմական անձերի ու նրանց գործերի հաջորդականության ներկայացումը մնում է պատմական գիտության խնդիրը: Սակայն ակնհայտ դարձավ, որ պատմության առարկան այլևս չի կարող սահմանափակվել պատմության ընթացքի, պատմական եղելությունների հաջորդականության ներկայացմամբ: Այստեղ վճռորոշ դարձավ մի նոր հանգամանք:

- Պատմական գիտությունն անցնում էր իր ներքին ծավալման և տարբերական օրինաչափ փուլը, որը հատուկ էր եղել ամեն մի գիտության զարգացմանը: Այսպես, ֆիզիկական XVII-XVIII դդ. «բնական փիլիսոփայությունը», արդեն XIX դարում իր ներսում տարաբաժանված էր մի շարք գիտակարգերի՝ մեխանիկա, թերմոդինամիկա, էլեկտրականություն և մագնիսականություն, օպտիկա և այլն, իսկ դարակեսին, դրանցից վեր գտնվող մի մակարդակում, արդեն ձևավորվել էր տեսական ֆիզիկան, որը կոչված էր անելու ընդհանուր հարցադրումներ և լուծելու ընդհանուր խնդիրներ: Կենսաբանությունը և քիմիան նույնպես ապրել էին ներքին տարաբաժանման ընթացք և բազմաթիվ գիտակարգերի բարդ համակարգ էին կազմում: Ինչպես արդեն ասել եմ<sup>12</sup>, պատմական գիտության մեջ այս տեսակետից վճռորոշ եղավ XIX դարի երկրորդ կեսը: Հանդես եկան պատմական հետազոտությունների նորանոր բնագավառներ, պատմական նոր գիտակարգեր: Գիտական պատմության, առանձնապես քննական պատմության համար էական դեր ունեցավ պատմության ինքնուրույն օժանդակ գիտաճյուղերի կազմավորումը (աղբյուրագիտություն, հնագրագիտություն, ծագումնաբանություն, ժամանակաբանություն և այլն): Ինչպես ասվեց, այդ ընթացքում հատկապես պատմամշակութային հետազոտությունների ծավալումը և, այդպիսով, պատմական

<sup>10</sup> E. Cassirer. Op. cit., p. 134.

<sup>11</sup> Բնականաբար, գիտական պատմության առարկան այդպես էին հասկանում պատմության սոցիոլոգիականացման տեսության ներկայացուցիչները՝ ընդհանուր առմամբ, անկախ տարբեր երանգավորումներից:

<sup>12</sup> Տե՛ս «Գիտողություններ պատմության փիլիսոփայության առարկայի մասին. Կանտից մինչև նորականականություն» հոդվածում, «Բանբեր Երևանի համալսարանի», հմ. 1 (103), 2001, էջ 23-24:



հատուկ գիտությունների՝ հնագիտության և ազգագրության (մշակութային մարդաբանության) կազմավորումը բացառիկ նշանակություն ունեցան պատմական գիտության առարկայի մեկնաբանության և պատմափիլիսոփայական նոր ըմբռնումների համար:

- Պատմական գիտության ներքին կարողականությունների այդ ծավալումը բազմաթիվ գիտակարգերի մեջ նորովի դրեց պատմական տեսության խնդիրը, այն է՝ պատմության նկատմամբ ընդհանուր տեսական անդրադարձի, ընդհանուր պատմական հարցադրումների խնդիրը: Իրավիճակի նորությունն այն էր, որ գիտական պատմության՝ քննական պատմության դիրքերի ամրապնդումն իրական հիմք եղավ վերջնականապես հրաժարվելու համար Կոնտի, Սպենսերի, Միլի պոզիտիվիզմից, որը պատմական տեսության գործառույթը պատմական գիտության ոլորտից փոխանցում էր հասարակության մասին ընդհանուր տեսությամբ՝ սոցիոլոգիային, իսկ պատմությամբ հատկացնում էր օժանդակ դեր այդ ընդհանուր, տեսական գիտության նկատմամբ, որին նա փաստեր է տրամադրում: Մինչդեռ, դրան հակառակ, բուն պատմագիտության մեջ ամրապնդվում էր այն համոզումները, որ պատմության վերաբերյալ անխուսափելիորեն բարձրացող ընդհանուր տեսական և փիլիսոփայական հարցադրումները և լուծումները (որոնք դասական պատմափիլիսոփայության քննության առարկա էին եղել) տրրված են, պարունակվում են հենց պատմագիտության մեջ: Այսինքն՝ ըստ այսպիսի մոտեցման, պատմության ամեն մի դասական շարադրանք իմպլիցիտ կերպով, իսկ երբեմն (հատկապես բանավեճերի ընթացքում) նաև բացորոշ ձևակերպված, պարունակել է պատմության որոշակի ըմբռնում, և վերլուծաբան-տեսաբանը կարող է այն ի հայտ բերել և բացորոշ ձևակերպել որպես պատմության այս կամ այն մեկնաբանություն: Եվ եթե այս վերլուծական աշխատանքն ընդգրկի պատմագիտության զարգացման ամբողջ ընթացքը, ապա կբացահայտվեն պատմության վերաբերյալ եղած և բոլոր հնարավոր տեսական՝ իմացաբանական, մեթոդաբանական, հարցադրումները և դրանց լուծումները:

Պատմական գիտության մեջ ձևավորված այս մոտեցումն ուղղակիորեն հակադրվում էր դասական պատմափիլիսոփայությանը, որը պատմական նյութը «տեղավորում էր» վերացական՝ մտահայեցողական և համընդհանրական, որևէ կադապարի մեջ, մինչդեռ այս մոտեցմամբ պատմության վերաբերյալ տեսական հարցադրումները պետք է ունենային փորձնական, էմպիրիկ հիմք. դա գործնական պատմագրության («պատմական աշխատությունների պատմության») փաստական նյութն է, և նրանով կարող է գործառել այդ նյութին մասնագիտորեն քաջատեղյակ պատմաբանը:

- Պատմագիտության մեջ ձևավորված այս մոտեցման, այս պատմական գիտակցության դրսևորումները եղան պատմության տեսական հարցերն արծարծող այն բազմաթիվ աշխատությունները, որոնցով հանդես եկան պատմական գիտության ականավոր ներկայացուցիչները (դրանցից մի քանիսը հիշատակվեցին վերը): Սա դարձավ ավանդույթ<sup>11</sup>, որի կրողները եղան նաև անգլիացի պատմաբան և փիլիսոփա Ռ. Ջ. Քոլինգվուդը, ֆրանսիացի պատմաբաններ Մ. Բյուկը, Լ. Ֆերը, Ֆ. Բրոդելը և ուր.: Սրանց պետք է ավելացվեն մշակույթի տեսության դասականների՝ Ֆ. Բոասի, Դ. Բիդնի, Ա. Կյոլբերի և ուր. աշխատությունները,

<sup>11</sup> Կարելի է նորից ընտրողաբար թվարկել այդ ավանդույթին սկիզբ դրած աշխատություններից մի քանիսը. K. Lamprecht. *Moderne Geschichtswissenschaft*; J. T. Shotwell. *An Introduction to the History of History*; J. H. Robinson. *Mind in the Making*; Idem. *The Humanizing of Knowledge*; H. E. Barnes. *The New History and Social Studies*; Idem. *The History of Western Civilization*; F. S. Marvin. *The Living Past*. G. P. Gooch. *History and Historians in the Nineteenth Century*; F. J. Teggart. *Prolegomena to History*; Idem. *Theory and Processes of History* և այլն:

որոնք, հաջորդելով Լ. Մորգանի և Է. Թայլորի աշխատություններին, էական եղանակով պատմության տեսության և փիլիսոփայության կազմավորման համար<sup>14</sup>:

- Պատմության շատ տեսաբաններ, հատկապես սկզբնական շրջանում, դասական պատմափիլիսոփայությունից սահմանազատվելու համար գերադասում էին հրաժարվել «պատմափիլիսոփայություն» տերմինի գործածությունից և իրենց աշխատությունները վերագրում էին պատմության տեսության բնագավառին և խոսում էին պատմության տարբեր մեկնաբանությունների մասին: Սակայն նրանց աշխատությունների հանդես գալու փաստն իսկ վկայում է և նորից ու նորից հավաստում, որ տեսության մշակումը, պատմության վերաբերյալ փիլիսոփայական հարցադրումները, փիլիսոփայական անդրադարձը (ռեֆլեքսիան) անխուսափելի և օրինաչափ են գիտության համար:

Եթե թույլատրելի են զուգահեռներ, ապա կարելի է ասել, որ պատմական գիտության դասական ներկայացուցիչների՝ պատմության տեսական հարցերին նվիրված աշխատությունները նույն նշանակությունն ունեցան պատմական գիտության համար, ինչ բնագիտության համար՝ նրա այն դասական ներկայացուցիչների գրվածքները, որոնք Արևմուտքում հորշորջվում են փիլիսոփա գիտնականներ: Եվ Ալբերտ Էյնշտեյնը, Նիլս Բորը, Մաքս Պլանկը, Մաքս Բոռնը, Էրվին Շրյոդինգերը, Վեռներ Հայզենբերգը, Լուի դե Բրոյլը և մյուսները դա ընկալում էին որպես իրենց դարակազմիկ հետազոտությունների բուն էության ճշգրիտ անվանումը<sup>15</sup>:

- Մի շատ կարևոր առանձնահատկությամբ են աչքի ընկնում պատմագիտության խոշոր ներկայացուցիչների ընդհանուր տեսական աշխատությունները: Դրանք արծարծում են պատմական գիտության հիմնահարցերը. նրա տեղը գիտությունների համակարգում, պատմական ճանաչողության առանձնահատկությունները, նրա գիտականության չափանիշները, այն ճանաչողական եղանակներն ու միջոցները, որոնք ապահովում են պատմության շարադրանքի օբյեկտիվությունը: Ուրեմն, դրանցում քննարկումներն ընթանում են իմացաբանական և մեթոդաբանական հարթության վրա, և բացակայում են գոյաբանական հարցադրումները. ինչպիսին է պատմությունն ինքնին, օբյեկտիվորեն, կան արդյոք պատմության օրինաչափ ընթացք և այդ ընթացքի ուղղվածություն և նման ուրիշ հարցեր, որոնք դրվում էին դասական պատմափիլիսոփայության մեջ: Մինչդեռ, ըստ այդ տեսակետի, այն մասին, թե ինչպիսին է պատմությունն ինքնին, օբյեկտիվորեն, մենք կարող ենք իմանալ միայն այնքան, որքան որ մեզ հայտնի է պատմական ճանաչողության միջոցով, պատմական գիտության զարգացման ընթացքում: Այնպես որ այս հարցերի պատասխանները ևս պետք է փնտրել պատմական աշխատությունների մեջ. դա ևս մասնագիտական խնդիր է, պատմաբանի խնդիրն է, պատմական ճանաչողության ձեռքբերումների և ունեցած հնարավորությունների խնդիրը: Այդպես ստացվեց, որ պատմության տեսության գործառույթը (որ պատկանում էր դասական պատմափիլիսոփայությանը) մասամբ ստանձնեց պատմագրությունը որպես օժանդակ պատմական գիտություն<sup>16</sup>:

<sup>14</sup> «The Shaping of American Anthropology, 1883-1911. A Franz Boas Reader». N. Y., 1974; D. Bidney. Theoretical Anthropology. New Brunswick and L.: Transaction Publishers, 1996; A. L. Kroeber. The Nature of Culture. Chicago and London: The University of Chicago Press, 1987.

<sup>15</sup> Հատկանշական է, որ Էյնշտեյնի 70-ամյակին նվիրված «Ալբերտ Էյնշտեյնը, փիլիսոփա գիտնականը» հոբելյանական հատորը լույս է տեսել «Ժամանակակից փիլիսոփաները» մատենաշարով. P. A. Schilpp (ed.). Albert Einstein, Philosopher-Scientist. Evanston, Ill.: The Library of Living Philosophers, Inc., 1949:

<sup>16</sup> Ամենից առաջ, սկսած 19-րդ դ. կեսերից, գերմանական պատմագիտության կազմում առանձնացված էր եղել «հիստորիկա» («Historik») գիտաճյուղը՝ պատմական մտածողության և պատմական հետազոտությունների մասին, նրա մեթոդների ու խնդիրների

- Դասական պատմափիլիսոփայության գոյաբանական հարցադրումների նկատմամբ ժխտողական վերաբերմունքն այնքան մեծ էր, որ պատմության սովորածավալ հատորների մեջ հաճախ տեղ չէր գտնվում նույնիսկ Առնոլդ Թոյնբիի՝ այդ խոշոր մասնագետ պատմաբանի, «Պատմության հետազոտությունը» հիշատակելու համար: Եվ դրա պատճառն այն էր, որ այդ աշխատությունը պարունակում է օբյեկտիվ պատմության, ինքնին վերցված պատմության շարադրանքն ու մեկնաբանությունը. նրանում քաղաքակրթությունների, հասարակությունների էվոլյուցիան, վերելքն ու անկումը, նրանց «հանդիպումները» (encounters) ժամանակի և տարածության մեջ Թոյնբին ներկայացրել է իր մտահղացած պատմափիլիսոփայական կաղապարի շրջանակում, որը նա կառուցել է՝ քննելով, վերլուծելով, ըմբռնելով պատմության հսկայածավալ նյութը:

Բերեմ միայն մեկ տիպական գնահատական: «Արևմտյան քաղաքակրթության պատմություն» հիմնարար աշխատության հեղինակները, ի մի բերելով «ժամանակակից (XX դարի) քաղաքակրթության տեսանկյունները», «Հասարակական գիտությունները և փիլիսոփայական մտահայեցողությունը» բաժնում պատմական գիտության կապակցությամբ գրում են նաև հետևյալը. «Մի քանի փորձեր արվեցին մարդկության ամբողջ պատմության ընթացքը նկարագրելու ուղղությամբ, սակայն՝ աննշան արդյունքներով: Դրանց թվում էին Օսվալդ Շպենգլերի «Արևմուտքի մայրամուտը» հոռետեսական երկը՝ գրված Առաջին համաշխարհային պատերազմից հետո, և Առնոլդ Թոյնբիի «Պատմության հետազոտություն» հանգամանակից աշխատությունը (1934-1954)»<sup>17</sup>: Թոյնբիի աշխատության նկատմամբ կանխակալ վերաբերմունքը, այն թերագնահատելու միտումն արտահայտում էր նաև պատմաբանների ձգտումը՝ այսուհետև պատմական տեսությունը սահմանափակել պատմական գիտության շրջանակներով՝ նույնիսկ «մասնագետ պատմաբանին» թույլ չտալով անցնել օբյեկտիվ պատմության նկատմամբ փիլիսոփայական մտահայեցողության (իմա՝ պատմափիլիսոփայության գոյաբանական հարցադրումների) ոլորտը:

- Հարկավոր է, սակայն, վերապահում անել, որ, ի տարբերություն ամերիկյան պատմագրության, Արևմտյան Եվրոպայի երկրներում, որոնց մշակույթի մեջ գորեղ է փիլիսոփայական ավանդույթը, երբեք գերիշխող չդարձավ պատմական գիտությունը փիլիսոփայությունից օտարելու միտումը: Առանձնապես հետաքրքրական են Ռոբին Զորջ Քոլինզվուդի հայտնած նկատառումները: Անգլիացի այս խոշոր պատմաբանը պատմության՝ որպես գիտության, այն հատկությունները սահմանելու հիմնահարցը, որոնցով պատմությունը առանձնանում է գիտության համակարգում, համարում է հենց պատմափիլիսոփայության առաջնային խնդիրը: Ավելին, նա գտնում է, որ այդ խնդրի լուծումը նաև մի նոր քայլ կլինի բուն փիլիսոփայության համար, քանի որ կնշանակի իմացաբանության զարգացում. չէ՞ որ իմացաբանական պատկերացումները մինչ այժմ կազմավորվել են բնագիտական ճանաչողության կաղապարներով, և նրանցում արտացոլված չի եղել պատմական ճանաչողությունն իր առանձնահատկություններով: Այս նկատառումներից ելնելով՝ Քոլինզվուդը նույնպես գտնում է, որ պատմական ճանաչողության փիլիսոփայական՝ իմացաբանական և մեթոդաբանական հարցերի ընդունությունը ներկայումս մասնագետ պատմաբանի խնդիրն է, բայց՝ երկու ճշգրտումով. հարկավոր է, որ այդ պատմաբանն օժտված լինի ինքնուրույն պատմական մտածողության կարողությամբ (և ոչ միայն պատմության իմացությամբ) և «պատմության փորձի», նրա ընձեռած նյութի նկատմամբ փիլիսոփայական

մասին» (սահմանման այս ձևակերպումները վերցված են Հայմրիխ Օմիդտի «Փիլիսոփայական բառարանից»):

<sup>17</sup> C. J. H. Hayes, M. W. Baldwin, C. W. Cole. History of Western Civilization. Vol. 2. N. Y.-L.: Macmillan Company, 1962, p. 859-860.

անդրադարձ կատարելու, դրանց շուրջը խորհրդածելու ունակությամբ<sup>16</sup>։ Այսպիսի մտածելակերպի պարագայում բնական է Քոլինգվուդի վերաբերմունքը նաև դասական պատմափիլիսոփայության նկատմամբ։ Քննելով գիտական պատմագրության ձևավորման ընթացքը՝ Քոլինգվուդը շարադրում է պատմագրության անցած հիմնական փուլերը (դարաշրջանները) հունա-հռոմեականից մինչև XX դարի սկզբի պատմագրությունը։ Եվ այդ շարադրանքում յուրաքանչյուր դարաշրջանի համար Քոլինգվուդը էական է համարում ժամանակի պատմափիլիսոփայական դասական տեսությունները, որոնք էլ նա շարադրում է որպես յուրաքանչյուր դարաշրջանի պատմագրության ինքնագիտակցում և ինքնըմբռնում։ Թո՛ղ որ հեզելական է այս մտեցումը, բայց այն շահավետ կերպով առանձնացնում է Քոլինգվուդի աշխատությունը պատմափիլիսոփայության առարկայի շուրջը ծավալված բանավեճերի մեջ։ Դեկարտը, Վիկոն, Հյումը, Հերդերը, Կանտը, Հեգելը, Մարքսը, Բրեդլին, Վինդեխմանը, Ռիկերտը, Կրոչեն և ուր. նրա շարադրանքում դարձյալ դառնում են նոր պատմափիլիսոփայության անբաժանելի մասը։ Այնպես որ պատմական գիտությունը փիլիսոփայությունից օտարելու միտումը չէր կարող գերիշխող դառնալ։ Պատմության վերաբերյալ տեսական՝ իմացաբանական և մեթոդաբանական հարցերի քննարկումները անխուսափելիորեն տանում են դեպի փիլիսոփայական ընդհանուր հարցադրումներ։ Ինչպես որ առհասարակ գիտության պարագայում, «բնության փիլիսոփայության», «մետաֆիզիկայի» ապարեզից դուրս գալուց հետո, գոյատևեց գիտության փիլիսոփայությունը որպես տեսական բնագիտության բնականոն շարունակություն (նորից հիշենք տեսական բնագիտության դասականների «փիլիսոփա գիտնական» հորջորջումը), այդպես էլ իր գործառույթը շարունակեց վերըմբռնված պատմության փիլիսոփայությունը։ Քսաներորդ դարի կեսին պատմական գիտության տեսության հարցերի շուրջը ծավալված բանավեճերին, մասնագետ պատմաբաններին համահավասար, մասնակցում էին փիլիսոփաները, որոնք նաև նախաձեռնողը եղան մի քանի հանգուցային հարցադրումների, մասնավորապես՝ պատմական գիտության մեջ գիտելիքի օբյեկտիվության առանձնահատկությունների, պատմական օրենքների բնույթի մասին և այլն (հիշարժան են տևական բանավեճերը պատմական շարադրանքի ժամանակային պայմանավորվածության և օբյեկտիվ բովանդակության փոխհարաբերության հարցի շուրջը, Հեմպելի covering laws-ի տեսության վերաբերյալ)։

Պատմության տեսության և պատմափիլիսոփայության մեջ տեղի ունեցած գաղափարական տեղաշարժերի յուրովի արտահայտությունը եղավ պատմության մշակութային մեկնաբանության տեսությունը՝ որպես քաղաքականացված պատմագրության և պատմության սոցիոլոգիական մեկնաբանության իրական այլընտրանքը բուն պատմագրության մեջ։

Պատմության մշակութային մեկնաբանությունը, ինչպես ասվել է, բավականին երկար ավանդույթ ունի *փիլիսոփայության* մեջ՝ սկսած Վոլտերից մինչև նորականտականություն։ Իսկ բուն *պատմագրության* մեջ այդ մեկնաբանության գաղափարների արծարծումը, հիմնավորումը և գործնական կիրառումը տվել են այսպես կոչված «նոր պատմության»<sup>17</sup> դպրոցի ներկայացուցիչները՝ Ջեյմս Հարվի Ռոբինսոնը (Robinson, որի «Նոր պատմություն» գրքի վերնագիրն էլ դարձել է դպրոցի անվանումը), Ջեյմս Թոմսոն Շոտուելլը (Shotwell), Ջորջ Լինկոլն Բերը (Burr), Կարլ Լոտուս Բեկերը (Becker), Չառլզ Օստին Բիրդը (Beard), Հարրի Էլմեր Բառնեսը (Barnes) և ուր.։ Նրանց գաղափարների տրամաբանական ծավալումը սխեմատիկորեն կարելի է ներկայացնել հետևյալ կերպ.

<sup>16</sup> Տե՛ս Բ. Ժ. Կոլլինգվուդ, *Идея истории. Автобиография*, М., 1980, էջ 5-12։

<sup>17</sup> Այս անվանումը վերծանվում է որպես «պատմության նոր ըմբռնում»։

- քաղաքական պատմագրության քննադատություն.

- համադրական պատմագրության ստեղծում՝ պատմական շարադրանքի մեջ ներգրավելով հասարակագիտական բոլոր գիտությունների ընձեռած նյութը, նպատակ ունենալով մարդու և հասարակության կեցության բոլոր տեսանկյունների համադրումը.

- անցում դեպի պատմության մշակութային մեկնաբանություն և, որպես արդյունք, քաղաքակրթությունների պատմության շարադրանքը, որոնք էլ հենց ներկայացնում են այդ համադրումը, այդ պատմական ամբողջությունը:

Պատմության մեկնաբանության իր առանձնահատկություններով այս պատմագրական դպրոցը աղերսներ ունի Լամպրեխտի գաղափարների հետ, Ռյուրկ-հայմի, Լևի-Բրյուլի և առհասարակ ֆրանսիական պատմագրության ավանդույթների հետ (այդ մասին ուղղակիորեն ասում է Բառնետը): Իր փիլիսոփայական հայացքներով այն հարում է առհասարակ ամերիկյան գաղափարախոսության համար տիպական պրագմատիզմին: Այս տեսանկյունից Ռոբինսոնի, Բեկերի, Բիրդի պատմափիլիսոփայության ամփոփ բնութագրությունը ես տվել եմ մեկ ուրիշ տեղում<sup>20</sup>: Իսկ պատմության մշակութային մեկնաբանության տեսությունը ավելի որոշակիացված և հստակ շարադրված է Բառնետի կողմից՝ պատմության տեսությանը նվիրված «Նոր պատմությունը և հասարակագիտական հետազոտությունները» գրքում և «Արևմտյան քաղաքակրթության պատմությունը» հիմնարար աշխատության մեջ (երկու ստվար հատորով):

Կարելի էր ասել՝ դրանք պատմության կոնկրետ շարադրանքներ են պատմագիտական տեսության՝ իր հղացած կաղապարով<sup>21</sup>: Բառնետն է «Encyclopedia Americana-ում (հատ. 14) պատմությանը նվիրված ծավալուն բառահոդվածի հեղինակը՝ «Պատմություն. նրա առաջացումն ու զարգացումը»: Եվ հատկանշական է, որ այստեղ, ինչպես և հիշյալ աշխատություններում, պատմության տեսության ու մեթոդաբանության խնդրակարգը արծարծելիս նա չի գործածում «պատմության փիլիսոփայություն» անվանումը, այլ ընտրում է «պատմության մեկնաբանություններ» տերմինը: Իսկ «պատմության փիլիսոփայություն» ասելիս նա նկատի ունի բացառապես դասական պատմափիլիսոփայական տեսությունները:

Իր առաջին գրքում՝ «Նոր պատմությունը և հասարակագիտական հետազոտությունները» աշխատության մեջ, Բառնետը ձևակերպել է մի դրույթ, որը հետո նա կրկնում է և՛ «Արևմտյան քաղաքակրթության պատմության» մեջ, և՛ «Encyclopedia Americana»-ում զետեղված հոդվածում: Չկա որևէ մեկ սկզբունք, ասում է Բառնետը, որով համակարգվեր մարդկության ամբողջ պատմությունը (ինչպես որ դա ուզում էին անել դասական պատմափիլիսոփաները). պատմաբանը չի կարող «մարդկային զարգացման ամեն մի ժամանակաշրջանը նկարագրելիս» շեշտադրել «մշակույթի նույն բաղադրիչը կամ փուլը»: Ահա այս դրույթի մասնավորեցված ձևակերպումները, որ տալիս է Բառնետը: Հին Արևելքում ռազմական, կրոնական և առևտրական տարրերն էին տիրապետողը, Հունաստանում արվեստը, գրականությունը և ընդհանուր մտավոր շահերն ու հետաքրքրություններն էին գերազանցապես ազդեցիկ, Հռոմի պատմության հիմնական նշանակությունը նրա ավանդն է իրավունքի զարգացման և կայսրության կյանքի վարչական կազմակերպման գործում, միջնադարում եկեղեցական հաստատությունների ազդեցությունն էր գերիշխում, Նոր պատմության վաղ շրջանը նշանավորվեց ազգությունների կազմավորումով, կապիտալի վերելքով և Առևտրական հեղափոխությամբ, տասնյոթերորդ դարի գլխավոր ձեռքբերումներն էին գաղութացման

<sup>20</sup> Տե՛ս Գ. Ա. Гезоркян, Очерк исторической методологии науки, Ер., 1987, էջ 23-30:

<sup>21</sup> Ինչպես պատմում է Բառնետը, «եկավ մի պահ, երբ Կարլ Բեկերը բարեկամաբար հիշեցրեց ինձ, որ ժամանակն է դադարել «նոր պատմության» մասին գրելուց և ձեռնամուխ լինել մի այդպիսի պատմություն գրելուն» (Barnes, 1935, p. VIII):

ոգին ու շարժումները և ժամանակակից գիտության ու քննական փիլիսոփայության կազմավորումը, տասնութերորդ դարի համար ընդհանուր մտավոր հեղափոխությունն է բնութագրական, և հենց այդ ժամանակ էլ սկիզբ առավ Արդյունաբերական հեղափոխությունը՝ մարդկության պատմության բոլոր ձևափոխություններից մեծագույնը, տասնիններորդ դարի կարևորագույն նշանակությունը բնագիտության և մեքենայական արդյունաբերության ապշեցուցիչ առաջընթացն էր, ազգային պետության կատարելագործումը և նորագույն՝ ազգային իմպերիալիզմի կազմավորումը, իսկ քսաներորդ դարը, անկասկած, իր կոչումը կհամարի նախորդ հարյուրամյակից իրեն բաժին հասած սոցիալական, տնտեսական, քաղաքական և դիվանագիտական խնդիրների լուծումը<sup>22</sup>:

Շատ կարևոր է գիտակցել, որ այս ձևակերպումները, միասին վերցրած, ամենևին էլ հասարակության բնութագրություններ չեն և ոչ էլ նրա պատմական ծավալման նկարագրություն: Դրանք հասարակագիտական ըմբռնումներ չեն: Դրանք պատմակա՛ն ժամանակաշրջանների բնութագրություններ են՝ տրված պատմաբանի կողմից, որոնք նա հետո գործի է դնելու՝ Արևմտյան քաղաքակրթության պատմական ընթացքը ըստ այդմ ժամանակաշրջան առ ժամանակաշրջան շարադրելու համար: Դրանք դառնում են այն հենքը, որի վրա հյուսվում է Բառնեսի բուն պատմական շարադրանքը «Արևմտյան քաղաքակրթության պատմությունը» գրքում<sup>23</sup>:

Պատմական տարբեր ժամանակներում, տարբեր տեղերում, տարբեր ժողովուրդների պատմության մեջ մարդկային կյանքի այս կամ այն կողմի, միտումի, գործունեության ոլորտի գերակայության մասին այս դրույթը Բառնեսը գործառնում է պատմության տեսության ու մեթոդաբանության մի շարք հանգուցային հարցերի լուծման ժամանակ:

(ա) «Նոր պատմագրության» այս դրույթը, պատմության մեկնաբանության իր պլյուրալիզմով, ուղղակիորեն հակադրվում է պատմափիլիսոփայության դասական տեսություններին, որոնք առաջադրում էին մեկ ելակետային սկզբունք, մեկ ընդհանրական օրինաչափություն, ըստ որի ծավալվում էր մարդկային պատմությունը ժամանակի և տարածության մեջ, մեկ կաղապար, որի մեջ տեղավորում էին բոլոր հասարակությունների զարգացման ընթացքը: Մինչդեռ հենց պլյուրալիզմի պատմակա՛ն սկզբունքն է համապատասխանում պատմությունը բնորոշող ամենից էական հատկանիշին՝ դարաշրջանների, հասարակությունների, պատմական զարգացման աստիճանների անհատական ուրույնությանը, պատմական անցքերի, դեմքերի ու գործերի միանգամյա բնույթին (դրանով է, որ պատմական գիտությունը տարբերվում է ոչ միայն բնական գիտություններից, այլև հասարակագիտությունից՝ «social studies»-ից, որոնց դիմում է Բառնեսը), այսպես կարելի է մեկնաբանել «նոր պատմագրության» այս մոտեցումը: Ահա մի լուսաբանող օրինակ: Բառնեսի (ասեմք, նաև հետագայի ուրիշ հեղինակների)՝ Արևմտյան քաղաքակրթության պատմության շարադրանքում Հին Հունաստանի և Հին Հռոմի քաղաքակրթական նկարագրերը շատ նման են Հեգելի «Պատմության փիլիսոփայության» մեջ «հունական աշխարհի» և «հռոմեական աշխարհի» նկարագրերին,

<sup>22</sup> St' u Barnes, 1925, էջ 11:

<sup>23</sup> Գրքի առաջաբանում նորից ամփոփ ներկայացված է այդ դրույթը. «Որոշ դարաշրջաններում միայն գոյության կոիվն է ամենից կարևորը եղել: Ուրիշներում կրոնն է գերակայել ժողովուրդների շահագրգռությունների մեջ: Մեկ ուրիշ դարում հարստության և իշխանության համար պայքարն է գերիշխող եղել: Որոշ ժողովուրդների դեպքում, թվում է, առավելապես արվեստը և գեղարվեստի իրերն են նշանակություն ունեցել», այնպես որ, ասում է Բառնեսը, «Արևմտյան քաղաքակրթության պատմությունը» գրքում «որևէ դարաշրջանի մի որոշակի ժողովրդի անդրադառնալիս են աշխատել են հատկապես շեշտել այդ դարաշրջանի և քաղաքակրթության ամենից բնորոշ և էությունը լուսաբանող հատկանիշները» (Barnes, 1935, p. V):

բայց Հեգելի մոտ դրանք մեկ պատմական ընթացքի աստիճաններ են՝ մարդու ազատության զարգացման և դրա գիտակցման տեսակետից. ըստ Հեգելի՝ անցումը «հունական աշխարհից» «հռոմեական աշխարհին» նշանավորում է անցում մարդկային անհատականությունից դեպի հասարակական մարդը՝ դեպի անձնավորությունը որպես իրավունքի վերացական սուբյեկտ: Եվ դա դրսևորվել է այդ «աշխարհներում» հասարակական կյանքի կազմակերպման առանձնահատկությունների, մարդու կեցության անհատական և հասարակական չափումների մեջ, բարոյա-իրավական ոլորտում, փիլիսոփայության, արվեստի և առհասարակ հոգևոր մշակույթի մեջ, որոնց նկարագրությունը հենց այդպիսի ենթատեքստով տալիս է Հեգելը: Բայց չէ՞ որ սա արդեն արտապատմական մի կաղապար է՝ կանխադրված բուն պատմության շարադրանքին. այսպես է դատում այն պատմաբանը, որն առարկում է հեգելյան լոգիզմին պատմափիլիսոփայության մեջ, ինչպես որ այսպես է դատում այն պատմաբանը, որը դեմ է սոցիոլոգիզմին պատմության մեջ:

(բ) «Նոր, համադրական պատմագրության» այդ մույն ելակետային դրույթն իր պլյուրալիզմով կարևորագույն նշանակություն է ստանում պատմագրության մեջ («conventional history», ստում է Բառնետը) իշխող՝ պատմության քաղաքական տեսության քննադատության համար: Այդ քննադատության մի քանի պահեր արժանի են հիշատակության: Քաղաքական պատմագրությունը, իհարկե, այն չէր, ինչ վոլտերյան կծու երգիծանքին արժանացած՝ մախորդ դարերի քաղաքական պատմագրությունը: XIX դարում, ստում է Բառնետը, այն ունեցավ դրական զարգացում՝ նպաստելով գիտական պատմագրության կազմավորմանը՝ գիտական աղբյուրագիտության ստեղծմանը, հետազոտության մեթոդաբանության կատարելագործմանը, նրա շնորհիվ էր, որ «Սեն-Սիմոնի հետաքրքրաշարժ, բայց անվստահելի, շաղկրատական հուշագրություններին, Ռոբերտսոնի և Հյումի հղկված ճարտասանական գրվածքներին փոխարինելու եկան Ռանկեի և նրա աշակերտների, ...Ֆրիմենի և անգլիական դպրոցի, Մինչեի, Թիերիի և ֆրանսիական քաղաքական դպրոցի խիստ ճշգրիտ ու մտածված պատմական աշխատությունները»: Սակայն, մտնելով մանրամասների մեջ և տարվելով դրանց ճշգրտումով, այն շարունակեց մնալ միակողմանի՝ «սովերի մեջ թողնելով և այդպիսով խաթարելով մարդկային զարգացման ամբողջական պատկերը»<sup>24</sup>: Եվ այս դեպքում նորից պետք է նկատի ունենալ, որ «ոչ մի կարգի գործոն չի կարող բավարար հիմք լինել պատմական ամբողջ մյուսի կարգավորման (historical organization) համար, առավել ևս՝ միայն քաղաքական գործոնները, որոնք լավագույն դեպքում կարող էին այդպիսի հիմք լինել Ասորեստանի, Պարսկաստանի, Հռոմի և Պրուսիայի պատմության որոշ փուլերի համար միայն: Եվ, հիրավի, XVI դարից սկսած՝ պատմության մեջ (նկատի ունի Արևմտյան քաղաքակրթության պատմությունը. - Հ. Գ.) տնտեսական և գիտական գործոններն ու ազդակները գերազանցեցին մնացած բոլորին»<sup>25</sup>:

(գ) Քաղաքական պատմագրությանը հատուկ էր էտատիզմը, քանի որ, ի վերջո, այն վերածվում էր «պետությունների կենսագրության»: Սրա հետ կապվում է ազգայնականությունը, առավելապես XIX դարի պրուս-գերմանական էտատիստական ազգայնականությունը, «որը ոգեշնչվում էր Ֆիխտեի, Առնդտի, Հեգելի գաղափարներով», և այս «հայրենասիրական մթնոլորտում» էր, որ ծնունդ առան Նիքոլի և Ռանկեի աշխատությունները, իսկ հետո այսօրինակ «ազգային հպարտության» միտումը տարածվեց Անգլիայում և Ֆրանսիայում և ապա՝ Ամերիկայում: Քաղաքական պատմությանը «ազգային անցյալը փառաբանելու» այս միտումին, այսինքն՝ ազգային կյանքի երևութական կողմին, Բառնետը հակադրում է «ազգային

<sup>24</sup> Barnes, 1925, p. 6-7.

<sup>25</sup> Տե՛ս մույն տեղը, էջ 12:



մշակութային զարգացման իրական փաստերն ու ուժերը»<sup>26</sup>: Պատմության այս-  
պիսի իմաստավորումը մեզ համար շատ հետաքրքրական է, ուստի արժե անել մի  
մեծ մեջբերում. «Նորագույն պատմագրությունը (այն է՝ պատմության նորագույն  
ըմբռնումը - Հ. Գ.) ցանկանում է ընդգծել և լուսաբանել այն ուժերը, գործոնները,  
որոնցով որևէ ժողովուրդ մեծ է դարձել որպես ազգ, նա ցանկանում է սահմանա-  
փակել պատմագրության մեջ նախկինում իշխած միտումը՝ զբաղվելու բացառա-  
պես պատմության այն ուղղման և քաղաքական իրադարձություններով, որոնք  
ծնում են նեղմիտ շոփհիզմ և ընդհանրապես անտեսում են ազգային զարգաց-  
ման կենսական փուլերը: Նորագույն պատմագրությունը փորձում է հստակորեն  
ցույց տալ, որ որևէ ժողովուրդ կարող է լինել ազատամիտ, հանդուրժող և հայրե-  
նասեր՝ առանց դառնալու ոչ ավելի ուզմաշունչ և մոլեռանդ, քան այդ կայահան-  
ջեն իր ժամանակի վտանգներն ու հրամայականները»: Եվ ամերիկյան պատմու-  
թյան օրինակով պնդում է «այն փաստը, որ մեր ազգային զարգացման մեջ մեծ  
գիտնականներն ու գյուտարարները, ինչպիսիք են Ֆրանկլինը, Ուիտնի, Ֆուլտո-  
նը, Մակ-Կոմբիլը, Մորգեն, Ֆիլդը, Էդիսոնը և Գիբբը, ավելի կարևոր են եղել, քան  
մեր առաջատար գեներալներն ու քաղաքագետները: Նորագույն պատմագրությու-  
նը պնդում է, որ ավելի ազնիվ է ունենալ զարգացած մեծ արդյունաբերական դե-  
մոկրատիա, քան կատարելագործված բռնապետական ուզմական մեքենա»<sup>27</sup>:

Պատմագրության մեջ հիրավի կա մի ամբողջ ուղղություն, որը պատմական  
շարադրանքի մեջ էական տեղ է հատկացնում մարդկության մշակութային առա-  
ջընթացին: Բառները այդպիսի պատմաբանների մի ամբողջ ցուցակ է թվարկում,  
և դրանց մեջ կան պատմաբաններ, որոնք կհամաձայնեն «ազգերի մեծության»  
Բառնեսի գնահատականին: Բայց քաղաքակրթության ամբողջության մեջ մտա-  
վոր մշակույթի, տեխնոլոգիայի և գիտության հատուկ նշանակության մասին  
դրույթը պատմագիտական շատ ավելի լայն համատեքստ ունի, քան «ազգերի մե-  
ծության» խնդիրն է: Դա լուսաբանելու համար հարկավոր է մի փոքր ավելի ման-  
րամասն անդրադառնալ «նորագույն, կամ համադրական, պատմագրության» ևս  
մի քանի առանձնահատկություններին:

- Ըստ այս տեսության, ինչպես ասվեց, պատմության շարադրանքներն ար-  
դեն ընդգրկում են մարդկային շահերի, հետաքրքրությունների և գործունեության  
բոլոր ոլորտները, որոնք «ամենից կենսականն ու ազդեցիկն են եղել մարդկու-  
թյան գոյության և զարգացման համար, այն է՝ գերակայող մտավոր կողմնորո-  
շումները, տեխնոլոգիան և բնագիտությունը, տնտեսական գործունեությունը,  
հասարակական հարաբերությունները և քաղաքական, իրավական ու կրոնական  
հաստատությունները»: Եվ ահա այս «կենսական ու ազդեցիկ» ոլորտների մեջ  
Բառնեսը կենտրոնական տեղ է հատկացնում մտավոր ու տեխնոլոգիական գոր-

<sup>26</sup> Նույն տեղում, էջ 5 (ընդգծումն իմն է. - Հ.Գ.):

<sup>27</sup> Նույն տեղում, էջ 18: Նրանց, ովքեր ծանոթ են ԱՄՆ-ի պատմությանը, կարող է ա-  
նակնկալ և զարմանալի թվալ Ամերիկայի ազգային զարգացման երախտավորների այս-  
պիսի գնահատականը ամերիկացի պատմաբանի կողմից, որն այդպիսի համեմատությամբ  
ստվերի մեջ է թողել ամերիկյան պատմության հասարակական-քաղաքական նշանավոր  
դեմքերին: Բայց նկատի ունենանք հակադրության ենթատեքստը և ա, . իդեալը, որի տեսա-  
կետից արված են այդ պնդումները: Հանրապետության հիմնադիր հայրերի, ամերիկյան  
սահմանադրության հայրերի (ասենք՝ ամերիկյան սահմանադրությունն ինքը քաղաքակր-  
թական եզակի արժեք է), նախագահներ Լինկոլնի, Վիլսոնի, Ռուզվելտի և ուր. պատմա-  
կան ավանդը հենց այն է, որ նրանց ջանքերով ստեղծվեց մի երկիր, որը մի ամբողջ պատ-  
մական ժամանակաշրջան՝ XVIII դ. դարի վերջերից մինչև XX դ. սկիզբը, համարվում էր  
քաղաքակրթական իդեալների կրողը: Նրանց ջանքերով ստեղծվեց և ապահովվեց հա-  
սարակական-քաղաքական այն միջավայրը, որի մեջ միայն հնարավոր եղան արդյունաբե-  
րական դեմոկրատիան և մտավոր մշակույթի զարգացումը, գիտատեխնիկական առաջա-  
դիմությունը՝ ժամանակի քաղաքակրթության այդ բարձրագույն դրսևորումները:



ծոններին. նա ընդունում է, որ «քաղաքակրթությունն ունի տնտեսական ենթահիմք, բազիս», բայց՝ «պատմական յուրաքանչյուր ժամանակաշրջանում գիտական ճանաչողության և տեխնոլոգիաների բնույթն է որոշում, թե ինչ կերպ կընթացա պայքարը տնտեսական ոլորտում, իսկ տնտեսական փոփոխությունների բնույթն էլ մեծապես կորոշի գերակայող հասարակական հարաբերությունների և քաղաքական հաստատությունների բնույթը»<sup>26</sup>: Հաջորդ նկատառումը ավելի կհստակեցնի մտավոր ու տեխնոլոգիական գործոններ հասկացության պատմական բովանդակությունը:

- Ինչպես ասվեց վերը, Էդուարդ Թայլորից հետո քաղաքակրթության պատմության մեջ հատուկ տեղ տրվեց նրա հնագույն շրջանին, որը Բառնետը համարում է ոչ թե նախապատմական, այլ լիարժեք պատմական ժամանակաշրջան, բայց՝ նախագրային: Սկզբունքային դրույթն այն է, որ մարդու կազմավորման հետ միասին կազմավորվել են այն մշակութային կաղապարները (frameworks), որոնք հետագա պատմության ընթացքում լցվում են առարկայական բովանդակությամբ: Դա վերաբերում է, առաջին հերթին, նախնադարյան մարդու և ժամանակակից մարդու մտածողությանը: Նախնադարյան մարդու մտքի վրա իշխում են հավատալիքները, նա դեռևս չունի մտածողության այն «կարգապահությունը», որը ձեռք է բերվում տրամաբանական գործողությունների փորձառությանը, նա չունի գիտելիքների որակական պաշար, նա դիմում է երևակայությանը՝ նրա մտածողությունը առասպելաբանական է... Սակայն «դրա պատճառն այն չէ, թե մի ինչ-որ խիստ տարբերություն կա նրա և ժամանակակից մարդու միջև՝ մտածողությամբ օժտված լինելու առումով: Հնագույն ժամանակներից սկսած մտածողության կատարելագործումները մտածողության տեխնիկայի առաջադիմության և դրական գիտելիքների ընդհանուր ծավալի աճի հետևանքն են»: Հնադարյան ժամանակաշրջանին են վերաբերում հիմնական՝ կաղապարային ձեռքբերումները մարդկային կյանքի բոլոր ոլորտներում՝ նյութական և հոգևոր մշակույթի, հասարակական կյանքի, տնտեսության մեջ, և մարդու գործունեության այս բազմազան ձևերի մեջ հնարավոր է դառնում նրա ուղեղի և բանականության, նրա ներքին հնարավորությունների և կարողությունների, նրա բազմազան հմտությունների զարգացումը, պնդում է Բառնետը՝ վկայաբերելով նաև ժամանակի պատմագիտության, հնագիտության, մարդաբանության տվյալները: Որակական առումով, հետագայի բոլոր մշակութային ձեռքբերումները հնարավոր դարձան, որովհետև մարդու ձևավորումը արդեն նշանակում էր մշակույթի ձևավորում սկզբունքորեն. հին քարի դարում արդեն առկա էին մշակութային կաղապարները, թեպետև դրանք լցնող բովանդակության մի փոքր մասը կար»<sup>27</sup>: Արևմտքի պատմական, մշակութաբանական, մարդաբանական գրականության մեջ ընդունված այս մոտեցման նրբերանգները ավելի հստակորեն երևում են Լյուիս Մամֆորդի տված շարադրանքում:

Իհարկե, ակնհայտ է գործիքների, դրանց պատրաստման և օգտագործման դերը մարդու և հասարակության կազմավորման գործում: Բայց հենց այդ պատճառով հարկավոր է զգուշանալ, որ ակամա չգերազանհատենք այդ դերը և աշխատենք ամբողջապես դրանով բացատրել մարդու և մարդկության առաջընթացը՝ մարդկային քաղաքակրթության հանդես գալը, պատմական մի դարաշրջանից մյուսին անցնելը և այլն: Մեկնելով սրանից՝ Մամֆորդը անում է իր առաջին կարևոր վերապահումը. անցումը դեպի քաղաքակրթություն, որով սկսվում է բուն պատմական ժամանակաշրջանը, նշանավորվում է ոչ թե ինքնին վերցրած ար-

<sup>26</sup> Նույն տեղում: Տե՛ս նաև էջ 217-221, 567-568:  
<sup>27</sup> Տե՛ս Barnes, 1935, էջ 37, 67- 72: Առանձնապես կարևոր են Կրոբերի, Գոլդենվայզերի, Բենեդիկտի վկայակոչումները. A. L. Kroeber. Anthropology. Harcourt: Brace, 1923; A. A. Goldenweiser. History, Psychology, and Culture. Knopf, 1933; R. F. Benedict. Patterns of Culture. Houghton: Mifflin, 1934.

տաղրության և նյութական գործիքների ինչ-ինչ հեղափոխական առաջընթացով, այլ մարդու ներքին կարողությունների տևական զարգացմամբ ու դրանց իրացմամբ իր գործունեության մեջ, մասնավորապես՝ այդ նույն նյութական գործիքների հետ ու միջոցով կատարվող գործողությունների մանրամասնեցմամբ, կատարելագործմամբ, հմտացմամբ, մի բան, որը Մամֆորդը նշանակում է տեխնոլոգիա տերմինով. չի կարելի, ասում է նա, «գործիքներն ու մեքենաները նույնացնել տեխնոլոգիայի հետ, մասը տեղադրել ամբողջի փոխարեն»։ Եվ հենց դա է սկիզբ դնում մարդկային քաղաքակրթությանը և ոչ թե սոսկական «նյութական գործիքը»։ «Տեխնոլոգիայի» այս ըմբռնմանը լավագույնս կհամապատասխաներ պլատոնյան ըմբռնումը՝ հունարենի techné – արհեստ, արվեստ, հմտություն իմաստներով<sup>30</sup>։ Գործիքների պատրաստումը և օգտագործումը ոչ թե ինքնին հանդիսանում է միայն մարդուն բնորոշ հատկանիշը, այլ երբ այն ձևավորվում է, միաժամանակ, լեզվական միջոցներով և դրանով իսկ դառնում է հասարակայնորեն հաղորդվող։

Մամֆորդի երկրորդ նկատառումը վերաբերում է այն բանին, որ այդ «տեքնե»-ի՝ մարդու բազմազան հմտությունների (ուրեմն և նրա ուղեղի և բանականության) զարգացումը հնարավոր է դառնում մարդկային գործունեության նույնպես բազմազան ձևերի մեջ, ոչ թե միայն կենսապահովմանը ծառայող գործիքների պատրաստման ու գործածության միջոցով։ Ուստի այսպիսի ըմբռնման տեսանկյունից բոլորովին էլ անակնկալ չէր քարի դարի մարդու քարայրային պատկերների հայտնաբերումը (1879, Իսպանիա), այնինչ homo instrumentalis-ի՝ այն ժամանակ իշխող և հեղինակավոր տեսաբանները սկսեցին կասկածի տակ առնել դրանց իսկությունը. մարդը, իբր, չպետք է ժամանակ ունենար, գոյության կովի դաժան պայմաններում, զբաղվելու այնպիսի ոչ կենսական, ոչ արդյունավետ, ոչ ուտիլիտար գործունեությամբ, ինչպիսին արվեստի ստեղծագործությունն է։ Այնինչ, «իր զարգացման բոլոր աստիճաններում մարդու հորինվածքներն ու ապրած փոփոխությունները ավելի շատ ծառայել են ոչ թե ուտելիք հայթայթելու կամ բնության դժվարությունները հաղթահարելու նպատակին, այլ իր մարմնական ներքին կարողություններն իրականացնելու և հնարավորությունները դրսևորելու նպատակին, որպեսզի մարդը կարողանար ավելի լրիվ բավարարել իր վերմարմնական պահանջումներն ու մտահղացումները»<sup>31</sup>։ Ուրեմն, մարդու ոչ ուտիլիտար գործունեության տեսակները անհրաժեշտություն են եղել, որովհետև դրանք, ընդհուպ մինչև արվեստի ստեղծագործությունները, կատարելագործել են նրա ուղեղը, իրականացրել են նրա մարմնական ներքին կարողությունների և հնարավորությունների բազմազան դրսևորումները, հմտացրել նրա գործողությունները։ Այս տեսակետից մարդու մտածողությունը միշտ պարունակել է իռացիոնալ՝ անմիջականորեն ոչ օգտակար, ոչ արդյունավետ, ոչ ուտիլիտար տարր<sup>32</sup>։

<sup>30</sup> Այնպես որ, «երբ մենք ուզում ենք փաստարկ գտնել մարդու՝ իր ազգակից արածների հանդեպ իսկապես ունեցած առավելությունը ապացուցելու համար, ապա լավ կլիներ, որ փնտրեինք այլ կարգի փաստարկ, քան նրա միայն պարզագույն քարե գործիքները վկայակոչելն է։ Կամ էլ, ավելի շուտ, մենք պետք է մեզ հարցնենք, թե ինչ գործունեությամբ էր զբաղված մարդը այն անթիվ-անհամար տարիների ընթացքում, երբ նա ավելի լավ գործիքներ էր պատրաստում այն նույն նյութերով և նույն մ. . . նմային շարժումներով, որոնք նա այնքան հմտորեն օգտագործեց նաև հետագայում» (տե՛ս L. Mumford. Technics and human development. In: The Lewis Mumford Reader. Ed. by D. L. Miller. New York: Pantheon Books, 1986, էջ 305, 307)։

<sup>31</sup> Նույն տեղում, էջ 309։

<sup>32</sup> «Մարդու հակումը՝ իր երևակայությունը, իր մտահղացումները, ցանկություններն ու ծրագրերը, իր վերացություններն ու գաղափարները միախառնելու իր առօրեական կյանքի ընթացքին, ինչպես տեսնում ենք, եղել է նրա ստեղծագործական փոխարի հնարավորությունների կարևոր աղբյուրը։ Ինչ-որ հստակ բաժանարար գիծ չկա իռացիոնալի և վեր-ռացիոնալի միջև...» (նույն տեղում, էջ 312)։

Հնագիտական-մարդաբանական նյութի հիման վրա «մտածողություն», «ճանաչողություն», «տեխնոլոգիա» հասկացությունների պատմական իմաստի այս ճշգրտումներից հետո պետք է որ հասկանալի լինի, թե ինչու քաղաքակրթության պատմաբանը դրանց կենտրոնական տեղ է հատկացնում «մարդկային գոյության և զարգացման համար կենսական և ազդեցիկ ոլորտների» շարքում (տնտեսական գործունեություն, հասարակական հարաբերություններ, քաղաքական, իրավական, կրոնական հաստատություններ և այլն): Զէ՞ որ քաղաքակրթության պատմաբանը ընդհանուր մեթոդաբանական նշանակություն է վերագրում հնագիտական-մարդաբանական հետազոտություններին:

- Պատմության ըմբռնման համար առանցքային այդ գաղափարն է արծարծված Բառնեսի «Արևմտյան քաղաքակրթության պատմությունը» գրքի «Պատմության մշակութային մեկնաբանությունը» և «Նախագրային դարաշրջանից դեպի պատմական հասարակություն» ենթազույգումներում: Նախնադարյան շրջանի հնագիտական և մշակութա-մարդաբանական հետազոտությունները փոխեցին առհասարակ պատմական գիտության կողմնորոշումները: «Նախագրային դարաշրջանի մշակույթների ուսումնասիրության առավել կարևոր ավանդը պատմական գիտության մեջ, իսկն ասած, չի սահմանափակվում միմիայն հնադարյան մարդու կյանքին վերաբերող նկարագրական նյութերով: Բնավ ո՛չ: Այն ինքնին մեծագույն ավանդ է պատմական բոլոր դարաշրջաններում մարդկային մշակույթի զարգացման տեսական հետազոտության մեջ: Կարճ ասած, մարդաբանությունը խթան հանդիսացավ այսպես կոչված՝ պատմության մշակութային մեկնաբանության համար»: Նախագրային դարաշրջանի մշակույթներին վերաբերող հնագիտական նյութը անհատականացված, մասնավորեցված չէ, չկան գրավոր վկայություններ եզակի անցքերի, դրանց հաջորդափոխությունների մասին: Հնագիտական նյութը, ըստ այդմ, հնարավորություն է տալիս կատարելու միայն մշակութային ամբողջության պատմական վերակազմություն: Եվ դա բարեբախտություն էր այն պատմական մտածելակերպի համար: Այս հանգամանքի բերումով, ասում է Բառնեսը, մշակութաբան-մարդաբանները առանձին դիպվածներից, պատմական անձանց կյանքի հետաքրքրաշարժ իրադարձություններից (anecdotes) ուշադրությունը փոխադրեցին մշակույթների ու դրանց հաստատությունների էվոլյուցիայի վրա, նրանք հավաստեցին, որ «քաղաքակրթության պատմությունը, իրականում, մշակույթի փոփոխվող տիպերի և կադապարների նկարագրությունն է: Այս տեսությունը բացառիկ արժեք է ներկայացնում քաղաքակրթության պատմության գիտական հետազոտության համար»<sup>33</sup>: Ուշագրավ է նաև այն, ինչ Բառնեսը գրել է ընդհանրապես պատմական գիտության կողմնորոշումների փոփոխման գործում նախնադարյան շրջանի հնագիտական և մշակութա-մարդաբանական հետազոտությունների ունեցած դերի մասին. «Մենք կարող ենք վստահ ասել, թե քանի որ պատմագրության մեջ հետաքրքրությունը փոխադրվում է պատահարներից դեպի քաղաքակրթություն, ապա անպայման պետք է ավելի շեշտադրվեն մշակույթի զարգացման օրենքները և հարկավոր է ավելի շատ հենվել մշակութային վերակազմության մեթոդի վրա»<sup>34</sup>: Այս բոլոր դրույթները (որոնք ընդգծված են մեջբերումների մեջ) արտահայտում են քաղաքակրթության պատմության մշակութային մեկնաբանության բնութագրական առանձնահատկությունները:

Պատմագիտության մեջ ուշադրության փոխադրումը դեպի քաղաքակրթության պատմություն իսկապես փոխում է շեշտադրումները ընդհանուր պատմության շարադրանքներում: Եվ դա պետք է իր արտացոլումը գտնի պատմափիլիսո-

<sup>33</sup> Barnes, 1935, p. 69.

<sup>34</sup> Barnes, 1925, p. 287.

փայլության մեջ: Բանն այն է, որ պատմական գրականության մեջ իրենց ծավալով նշանակալի տեղ են գրավում մասնավոր, կամ հարակից, պատմական գիտությունները, որոնք ներառում են հոգևոր ու մտավոր մշակույթի բնագավառները՝ մշակույթի պատմություն, փիլիսոփայության պատմություն, գիտության պատմություն (ինչպես և ավելի մասնավոր՝ բնագիտության պատմություն, առանձին գիտությունների՝ մաթեմատիկայի, ֆիզիկայի, լեզվաբանության պատմություն, մշակույթի առանձին ձևերի, գեղարվեստի պատմություն և այլն): Ինչպես որ պատմական հատուկ գիտաճյուղերը՝ հնագիտությունն ու ազգագրությունը, աննախադեպ զարգացում ունեցան՝ դառնալով փորձնական («դաշտային») հետազոտությունների վրա հենվող արդիական գիտություններ, այդպես էլ հարակից պատմական գիտությունները պատմական հետազոտությունների մեջ իրենց նվաճած ծավալով կարող են մրցել պատմական գիտության ավանդական ըմբռնման հետ: Ներկայումս մեծապես դրանցով պետք է միջնորդավորվեն պատմափիլիսոփայական ընդհանուր ըմբռնումները, մինչդեռ պատմության փիլիսոփայության տեսաբանները չեն նկատում պատմական գիտության այս ներքին զարգացումը: Հոգևոր ու մտավոր մշակույթի բնագավառը, որպես պատմական հետազոտությունների առարկա, ոչ միայն ծավալային առումով լրացնում է պատմության, որպես գիտության, ընդգրկման ոլորտը, այլև ներքին կարողականություններ ունի ազդելու պատմության ըմբռնման, ընդհանուր պատմական պատկերացումների, պատմական ընթացքի իմաստավորման վրա, պատմական եղելություններ տեսնելու, ընկալելու, շարադրելու կերպի վրա առհասարակ: Ուստի, եթե պատմափիլիսոփայական ըմբռնումները միջնորդավորվում են հոգևոր ու մտավոր մշակույթի բնագավառի պատմական հետազոտություններով, ապա դա էապես փոխում է պատմության փիլիսոփայության բնույթը՝ նրան տալով պատմամշակութային ուղղվածություն:

**Г. А. ГЕВОРКЯН - *Интерпретации истории в историографии конца XIX - начала XX вв.*** - В философии истории и в исторической теории постоянно подвергались критике повествовательная (нарративная) историография и характерная для нее "политическая концепция истории". В конце XIX - начале XX вв. в самой историографии произошел сдвиг интересов от повествовательной истории и ее политической интерпретации к идеалу целостности общества и культуры, который был в значительной мере обусловлен становлением этнографии и археологии как специальных исторических дисциплин, наиболее полно приближенных к этому идеалу. Возникли концепции истории цивилизаций, воплощающих целостность общества и культуры. В статье выделены для рассмотрения некоторые из этих концепций, по-разному интерпретирующих историю: социологическая интерпретация истории во французской исторической школе; социально-психологическая интерпретация истории немецким историком К. Лампрехтом; наконец, культурная интерпретация истории, данная Г. Барнесом, представителем американской школы "новой истории", и, что очень важно, осуществленная им в изложениях истории европейской и Западной цивилизации. В принципе культурная интерпретация истории, отводящая исключительное место истории интеллектуальной и духовной культуры, действительно является реальной альтернативой концепции социологизированной и политизированной истории, доминирующей в историческом сознании.